Մինչ ես այս վրդովմունքի մէջ էի, աչքս դարձրի դէպի այն կողմը, ուր նստած էր ծերունի որսորդը. տեսայ մի թուղթ ընկած էր այնտեղ, մօտենում եմ, — նոյն նամակը:

Ծերունին սաստիկ շտապելով, մոռացել էր իր հետ վեր առնել նամակը: Իմ ուրախութեանը սահման չկար. ես մի քանի րոպէ միայն երեխայի հրճուանքով շրջում ու շրջում էի ձեռքումս երկծալ թերթը, որի չորս երեսների վրայ սպիտակ տեղ չէր մնացել: Ամբողջապէս գրուած էր:

Կարօն տէր Թոդիկի դպրոցից փախչելու ժամանակ այնքան չէր սովորած, որ գրել գիտենար: Իսկ այնուհետեւ որտե՞ղ ուսել էր նա: Ես առաջ չէի կարդում նամակը, միայն նայում էի նրա վրայ: Երեւում էր, գրիչը խիստ ճարպիկ եւ համարձակ կերպով վազել էր տողերի վրայ, ուր տառերի իւրաքանչիւր գծերից երեւում էր մի հաստատուն ձեռքի ամրութիւն, որ գիտէ տիրապետել գրչին, որպէս իր սրին:

Որքան կարդում էի նամակը, այնքան աւելի գրգռւում էր իմ հետաքրքրութիւնը: Կարօն նոյնն էր մնացել իր գրութեան մէջ, ինչ որ էր իր խօսակցութեան ժամանակ: Նա խօսում էր խիստ պարզ, առանց գեղաբանութեան եւ հասարակ լեզուով: Նրա պարբերութիւնները շատ կարճ էին, միեւնոյն ժամանակ հասկանալի եւ խորախորհուրդ: Իր նամակի մէջ մնացել էր նա միեւնոյն ոճով: Ինձ առաջին անգամ պատահում էր տեսնել, որ մարդը գրում է այնպէս, որպէս խօսում են: Բայց ինչո՞ւ իմ վարժապետը չէր գրում այնպէս, որպէս մարդիկ խօսում են: Նրա գրածն ինձ համար մնում էր միշտ հանելուկ, չէր կարելի հասկանալ, կարելի էր միայն գուշակել, թէ ինչ էր ուզում ասել:

Կարօյի նամակի մէջ եւս մի քանի տեղեր մնացին ինձ անբացատրելի. նրանց մթին այլաբանական ձեւը, որպէս երեւում էր, պարունակում էր իր մէջ մի գաղտնիք, որ յայտնի էր միայն այն մարդուն, որի անունով ուղարկուած էր նամակը:

Ես կը բերեմ մի քանի կտորներ նոյն նամակից, որ մինչեւ այսօր չեմ մոռացել, որ եւ երբեք մոռանալու չեմ:

«Բարդուղիմէոս առաքելոյ վանահօր հետ տեսնուեցայ: Ես գտայ նրան այնպէս, որպէս յոյս ունէի: Ամէն ինչ պատրաստ էր: Այս աբեղային կարելի է կոչել մարդ, որ իր խօսքի տէրն է, եւ ո՛չ վարդապետ: Հազուագի՛ւտ բացառութիւն: Մի ամիս առաջ նա սկսել էր ծախել վանքի աւելորդութիւնքը, որպէս պատուիրել էի ես, եւ գոյացած գումարը բաւականացել էր գնելու գործիքներին: Խեղճ գիւղացիներից շատերը սոխ կոտորելու դանակ անգամ չունէին իրանց տանում. այժմ նրա վիճակի մէջ ամէն տղամարդ զէնքեր ունէ: Բոլորը